ՆԱԽԱԳԻԾ

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
մարտի 30-ի նիստի N 13
արձանագրային որոշման

Դրամաշնորհի համաձայնագիր թիվ 1660640

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

եւ

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

միջեւ

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ
ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՎԱՅՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ

համար

Դ/Հ ամսաթիվ՝ [օր, ամիս, տարի]

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տնտեսական եւ սոցիալական զարգացումը խթանելու նպատակով Ճապոնիայի հետ տնտեսական համագործակցության ընդլայնմանը վերաբերող՝ Ճապոնիայի Կառավարության եւ Հայաստանի Հանրապետության Կառավարության միջեւ [ամիս, օր, տարի] ամսաթվով թվագրված Հայտագրերի փոխանակումը (այսուհետ՝ Հ/Փ) եւ Ճապոնիայի համապատասխան օրենքները, կարգավորումները եւ բյուջետային հատկացումների կարգը, Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը (այսուհետ՝ ՃՄՀԳ) եւ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը (այսուհետ՝ Ստացող) համաձայնեցին կնքել հետեւյալ դրամաշնորհի պայմանագիրը (այսուհետ՝ Դ/Հ):

Հոդված 1 Դրամաշնորհի գումարը եւ նպատակը

ՃՄՀԳ-ի կողմից Ստացողին դրամաշնորհ է տրամադրվում մինչեւ հարյուր երեսունյոթ միլիոն ինը հարյուր հազար ճապոնական իենի (JPY137,900,000) չափով (այսուհետ՝ Դրամաշնորհ)՝ Հ/Փ-ի 1-ին պարբերության 1-ին ենթապարբերությունում նշված՝ Հայաստանի հանրային հեռուստատեսության արխիվային ձայնագրությունները թվայնացնելու համար նախատեսված սարքավորումների բարելավման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացմանը նպաստելու նպատակով, որի վերաբերյալ մանրամասները նկարագրված են սույն Համաձայնագրին կից 1-ին առդիրում:

Հոդված 2 Դրամաշնորհի հասանելիությունը

Դրամաշնորհը հասանելի է ՃՄՀԳ-ի կողմից տրամադրվող հատկացման ձեւով՝ Դ/Հ-ն ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ 20XX XXX-ն ընկած ժամանակահատվածի ընթացքում:

Հոդված 3 Դրամաշնորհի օգտագործումը

Ստացողի կողմից Դրամաշնորհն օգտագործվում է պատշաճ կերպով եւ բացառապես Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ՝ սույն Համաձայնագրին կից 2-րդ առդիրի 3-րդ

բաժնում նկարագրված՝ համապատասխանության պայմանները բավարարող ծագման երկրների ապրանքները եւ (կամ) ծառայությունները ձեռք բերելու համար 2-րդ առդիրի 2-րդ բաժնում նկարագրված՝ համապատասխանության պայմանները բավարարող քաղաքացիություն ունեցող մատակարարներին, կապալառուներին եւ (կամ) խորհրդատուներին (այսուհետ միասին՝ մատակարարներ) կատարվող վճարումները ծածկելու նպատակով:

Հոդված 4 Դրամաշնորհի կառավարումը

1) Ստացողը Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը նշանակում է որպես կատարող մարմին՝ Ստացողի անունից Ծրագիրն իրականացնելու համար (այսուհետ՝ Կատարող մարմին): Ստացողն ապահովում է, որ Կատարող մարմնի կողմից կատարվեն Ստացողի ստանձնած պարտավորություններից յուրաքանչյուրը եւ ստանձնում է Կատարող մարմնի՝ Ծրագրի հետ կապված բոլոր գործողությունների պատասխանատվությունը:

2) Ստացողը Ծրագրի իրականացման համար պետք է խորհրդատու ներգրավի: Խորհրդատուն Ստացողին ներկայացվում է ՃՄՀԳ-ի առաջարկությամբ: ՃՄՀԳ-ի կողմից խորհրդատու ներկայացնելը չի նշանակում, որ ՃՄՀԳ-ն ստանձնում է այն պարտավորությունները, որոնք խորհրդատուն կրում է Ստացողի առջեւ:

3) Եթե Դրամաշնորհի հասանելի դրամական միջոցները բավարար չլինեն Ծրագրի իրականացման համար, ապա Ստացողը պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկի անհրաժեշտ դրամական միջոցներն ապահովելու համար:

Հոդված 5 Ընդհանուր դրույթները եւ պայմանները

1) ՃՄՀԳ-ն եւ Ստացողն առաջնորդվում են 2016 թվականի հունվարի ամսաթվով թվագրված «Ճապոնական դրամաշնորհների համար ՃՄՀԳ-ի ընդհանուր դրույթներով եւ պայմաններով» (այսուհետ՝ ԸԴՊ):

2) ԸԴՊ-ի 2.01 բաժնում նախատեսված՝ գնումների վերաբերյալ մանրամասները նկարագրված են սույն Համաձայնագրին կից 2-րդ առդիրում:

3) ԸԴՊ-ի 3.01 բաժնում նախատեսված՝ հատկացման ընթացակարգը նկարագրված է սույն Համաձայնագրին կից 3-րդ առդիրում:

4) ԸԴՊ-ի 7.03 բաժնում նախատեսված հասցեները հետեւյալն են.

ՃՄՀԳ-ի համար

Փոստային հասցե՝

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ուզբեկստանի գրասենյակ

Ուզբեկստան, Տաշքենդ 100084, Ամիր Թեմուրի պողոտա 107-Բ, Միջազգային բիզնես կենտրոն, 5-րդ հարկ

Ում՝ Գլխավոր ներկայացուցիչ

Պատճենը՝

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական համագործակցության իրականացման վարչություն

5-25, Նիբան-չո, Չիյոդա-կու, Տոկիո 102-8012, ՃԱՊՈՆԻԱ

Ում՝ Գլխավոր տնօրեն

Ստացողի համար

Փոստային հասցե՝

(Լիազորված կազմակերպության անվանումը)

(Փաստացի հասցե)

Ում՝ (Պատասխանատու անձի պաշտոնը եւ անունը)

Կատարող մարմնի համար (եթե կատարող մարմինը Ստացողը չէ)

Փոստային հասցե՝

(Կատարող կազմակերպության անվանումը)

(Փաստացի հասցե)

Ում՝ (Պատասխանատու անձի պաշտոնը եւ անունը)

Հոդված 6 Ստացողի այլ պարտավորությունները

1) Ստացողը պետք է կատարի սույն Համաձայնագրին կից 2-րդ առդիրի 4-րդ բաժնում եւ 4-րդ առդիրում նկարագրված պարտավորությունները:

2) Ստացողը պետք է ապահովի, որ Ստացողի որեւէ պաշտոնատար անձ չի կատարի Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքների եւ (կամ) ծառայությունների գնման պայմանագրով նախատեսվող աշխատանքի որեւէ մասը:

3) Համաձայնեցված ժամանակացույցին համապատասխան՝ Ստացողը մինչեւ Ծրագրի ավարտը ՃՄՀԳ-ին հաշվետվություններ է ներկայացնում Ծրագրի ընթացքի վերաբերյալ այն ձեւով եւ այն մանրամասներով, որոնք ողջամտության սահմաններում կարող են պահանջվել ՃՄՀԳ-ի կողմից: Սեղմ ժամկետում, սակայն ամեն դեպքում Ծրագրի ավարտից հետո վեց (6) ամսից ոչ ուշ, Ստացողը ՃՄՀԳ-ին հաշվետվություն է ներկայացնում Ծրագրի ավարտի վերաբերյալ այն ձեւով եւ այն մանրամասներով, որոնք ողջամտության սահմաններում կարող են պահանջվել ՃՄՀԳ-ի կողմից:

Հոդված 7 Վերնագրերը

Սույն Համաձայնագրի հոդվածների վերնագրերը գործածվում են միայն դրանց հղում կատարելու հարմարության համար եւ չպետք է մեկնաբանվեն Դ/Հ-ի դրույթները սահմանափակելու կամ այլ կերպ փոփոխելու նպատակով:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՎԵՐՈԳՐՅԱԼԻ, ՃՄՀԳ-ն եւ Ստացողը, գործելով պատշաճ կերպով լիազորված իրենց ներկայացուցիչների միջոցով, համապատասխանաբար իրենց անունից

պատշաճ կերպով կնքեցին Դ/Հ-ն եւ հանձնեցին Երեւանում՝ վերը նշված օրվա եւ տարվա դրությամբ:

ՃԱՊՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ համար Կածուտոշի Ֆուշիմի Գլխավոր ներկայացուցիչ ՃՄՀԳ Ուզբեկստանի գրասենյակ	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության համար Վահան Մարտիրոսյան Նախարար Ականատես՝ Մարգարիտա Գրիգորյան Գործադիր տնօրեն Հայաստանի հանրային հեռուստաընկերություն

Առդիր 1

Ծրագրի վերաբերյալ մանրամասները

1) Նպատակը

Ծրագրի նպատակն արխիվի թվայնացման համապատասխան սարքավորումների տեղադրման միջոցով Հայաստանի հանրային հեռուստաընկերությունում պահվող հսկայածավալ եւ բազմաբնույթ անալոգային ձայնագրությունների վերականգնումը, պահպանումը եւ թվայնացումն է եւ թվայնացված ձայնագրություններին համացանցի միջոցով հասանելիություն ունենալու նպատակով հանրության համար առցանց միջավայրի ստեղծումն է՝ ըստ այդմ նպաստելով տնտեսական զարգացմանն ուղղված համակարգի ստեղծմանը, ենթակառուցվածքների բարելավմանը, տարածաշրջանային զարգացմանը եւ Հայաստանում աղետների կանխարգելմանն ուղղված միջոցառումների կատարելագործմանը:

2) Վայրը

Հայաստանի հանրային հեռուստաընկերություն, Երեւան

3) Աշխատանքի շրջանակները

ա) սարքավորումների ձեռքբերում եւ տեղադրում

բ) խորհրդատվական ծառայություններ

[Դատարկ թողնել]

Առդիր 2

Գնումների վերաբերյալ մանրամասները

Բաժին 1. Դրամաշնորհով նախատեսված գնումների իրականացման համար կիրառվող ուղեցույցը

Դրամաշնորհի պատշաճ եւ բացառիկ օգտագործումն ապահովելու նպատակով Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները եւ (կամ) ծառայությունները ձեռք են բերվում 2016 թվականի հունվարի ամսաթվով թվագրված «Ճապոնական դրամաշնորհների համար ՃՄՀԳ–ի Գնումների ուղեցույցի» համաձայն (Տեսակ I) (այսուհետ՝ Գնումների ուղեցույց):

Բաժին 2. Համապատասխանության պայմանները բավարարող քաղաքացիությունը

1) Մատակարարի (Մատակարարների)՝ համապատասխանության պայմանները բավարարող քաղաքացիություն է համարվում Ճապոնիայի քաղաքացի լինելն այն Մատակարարի (Մատակարարների) դեպքում, որոնք անմիջապես Ստացողի հետ են պայմանագիր կնքում Ծրագրի իրականացման նպատակով:

2) Վերոնշյալ 1-ին ենթաբաժնի մասով՝ «Ճապոնիայի քաղաքացի» հասկացությունը նշանակում է Ճապոնիայի ֆիզիկական անձինք կամ Ճապոնիայի ֆիզիկական անձանց կողմից վերահսկվող Ճապոնիայի իրավաբանական անձինք, ինչպես նկարագրված է Հ/Փ–ի 4–րդ պարբերության մեջ:

3) Վերոնշյալ 1–ին ենթաբաժնում սահմանված պայմանագրերի արժեքն արտահայտվում է ճապոնական իենով:

Բաժին 3. Համապատասխանության պայմանները բավարարող ծագման երկրները

1) Ծրագրի իրականացման նպատակով ապրանքների եւ (կամ) ծառայությունների ձեռքբերման համար համապատասխանության պայմանները բավարարող ծագման երկրներն են Ճապոնիան եւ Ստացողի երկիրը:

2) Չնայած վերոնշյալ 1–ին ենթաբաժնի դրույթներին՝ ՃՄՀԳ-ի եւ Ստացողի կողմից անհրաժեշտ համարվելու դեպքում Ծրագրի իրականացման նպատակով Դրամաշնորհը կարող է օգտագործվել այնպիսի երկրների ապրանքների եւ (կամ) ծառայությունների ձեռքբերման համար, որոնք Ճապոնիան կամ Ստացողի երկիրը չեն:

Բաժին 4. ՃՄՀԳ–ի կողմից իրականացվող ուսումնասիրությունները

Ստացողի գնումների ընթացակարգերի եւ դրանց առնչվող որոշումների մասով՝ Ստացողը ստորեւ նշված դեպքերում ՃՄՀԳ–ին է ներկայացնում ստորեւ նշված փաստաթղթերը՝ ՃՄՀԳ–ի կողմից ուսումնասիրության եւ համաձայնեցման համար: Ստացողը ՃՄՀԳ–ին ներկայացնում է նաեւ ՃՄՀԳ–ի կողմից ողջամտորեն պահանջվող ցանկացած հարակից փաստաթուղթ եւ տեղեկատվություն՝ ՃՄՀԳ-ի կողմից դրանց ծանոթանալու նպատակով: Եթե ՃՄՀԳ-ն որեւէ առարկություն չի ունենում այդ փաստաթղթերի վերաբերյալ, ապա ՃՄՀԳ-ն համապատասխանաբար Ստացողին տեղեկացնում է իր համաձայնության մասին: Այդպիսի ուսումնասիրություն եւ համաձայնեցում իրականացնելու ՃՄՀԳ–ի իրավունքը չպետք է դիտարկվի որպես ՃՄՀԳ–ի պարտավորություն: ՃՄՀԳ–ի կողմից ցանկացած այդպիսի ուսումնասիրություն իրականացնելու ընտրության պատճառով Ստացողը չի ազատվում Դ/Հ–ով նախատեսված իր որեւէ պարտավորությունից:

1) Խորհրդատուների համար նախատեսված պայմանագրի կնքումը

Խորհրդատուի համար նախատեսված սկզբնական պայմանագիրը ներկայացվում է անմիջապես դրա ստորագրումից հետո, որպեսզի ստուգվի պայմանագրի՝ Դրամաշնորհի համար համապատասխանության պայմանները բավարարող լինելու հանգամանքը:

2) Մրցակցային մրցույթից տարբերվող գնումների ընթացակարգերը

Մրցակցային մրցույթից տարբերվող՝ առաջարկված գնումների ընթացակարգերի նկարագրությունները ներկայացվում են նախքան այդ ընթացակարգերի մեկնարկը, երբ կոնկրետ հանգամանքներով պայմանավորված ոչ նպատակահարմար է դառնում մրցակցային մրցույթը:

3) Նախաորակավորման մասին հրապարակային հայտարարությունը

Նախաորակավորման մասին հրապարակային հայտարարության բովանդակությունը ներկայացվում է մինչեւ հրապարակային հայտարարություն տալը: Ցանկացած կարեւոր փոփոխություն այն փաստաթղթերում, որոնց հիման վրա տրվում է այդ հրապարակային հայտարարությունը, նույնպես ներկայացվում է մինչեւ փաստաթղթերը հավանական հայտատուներին ուղարկելը:

4) Նախաորակավորման հիման վրա ընտրությունը

(i) Նախաորակավորված ընկերությունների ցանկը, որոնք դիմել են որպես Մատակարար (Մատակարարներ) ընտրվելու համար, (ii) ընտրության գործընթացի վերաբերյալ հաշվետվությունը, այդ թվում՝ ընտրության գործընթացում Ստացողի կողմից ընդունված որոշումները եւ (iii) համապատասխան այլ փաստաթղթեր ներկայացվում են ընտրությունից անմիջապես հետո՝ նախքան նախաորակավորման արդյունքի մասին ծանուցումը դիմողներին ուղարկելը:

5) Մրցութային ընթացակարգերը

Մրցութային փաստաթղթերը, ինչպիսիք են հայտատուներին տրվող ծանուցումները եւ ցուցումները, հայտի ձեւը, հայտերի գնահատման չափանիշները եւ առաջարկվող պայմանագրի նախագիծը ներկայացվում են նախքան հայտեր ներկայացնելու հրավերն ուղարկելը: Նշված փաստաթղթերում կատարվող ցանկացած կարեւոր փոփոխություն նույնպես ներկայացվում է նախքան փաստաթղթերը հավանական հայտատուներին ուղարկելը:

6) Տեխնիկական առաջարկների վերլուծությունը

Տեխնիկական առաջարկների վերլուծության արդյունքները ներկայացվում են վերլուծությունից անմիջապես հետո եւ նախքան առաջարկվող գներով հայտերի բացման հրավերն ուղարկելը:

7) Հայտով առաջարկվող գների վերլուծությունը

Հայտով առաջարկվող գների վերլուծության արդյունքները ներկայացվում են վերլուծությունից անմիջապես հետո եւ նախքան հաղթող ճանաչված հայտատուի հետ պայմանագիր կնքելու մասին ծանուցումն ուղարկելը:

8) Մատակարարի (Մատակարարների) համար նախատեսված պայմանագրերի կնքումը

Մատակարարի (Մատակարարների) համար նախատեսված սկզբնական պայմանագիրը ներկայացվում է անմիջապես դրա ստորագրումից հետո, որպեսզի ստուգվի պայմանագրի՝ Դրամաշնորհի համար համապատասխանության պայմանները բավարարող լինելու հանգամանքը:

9) Դրամաշնորհի մնացորդային գումարի տրամադրումը

Դրամաշնորհի մնացորդային գումարի տրամադրման հարցի ուսումնասիրության եւ համաձայնեցման վերաբերյալ դիմումը՝ դրա հիմնավորման հետ միասին, ներկայացվում է ՃՄՀԳ–ին՝ նախքան Դրամաշնորհի մնացորդային գումարի օգտագործման մասով որեւէ գործողություն ձեռնարկելը:

10) Պայմանագրի փոփոխությունը կամ դադարեցումը

ա) Պայմանագրի ժամկետի երկարաձգման առաջարկը եւ դրա հիմնավորումը ներկայացվում են մինչեւ պայմանագրի մեջ փոփոխություն կատարելն այն դեպքում, երբ երկարաձգված ժամկետը երեք (3) ամսից ավելի է կամ պայմանագրի երկարաձգված ժամկետի ավարտի եւ Դրամաշնորհի հասանելիության վերջնաժամկետի միջեւ ընկած ժամանակահատվածը վեց (6) ամսից պակաս է դառնում:

բ) Պայմանագրի ցանկացած էական փոփոխության կամ դրա դադարեցման մասին

անմիջապես տեղեկացվում է ՃՄՀԳ–ին, եւ սկզբնական պայմանագիրն ու դրան առնչվող անհրաժեշտ այլ փաստաթղթերը նույնպես ներկայացվում են ստորագրվելուց հետո, որպեսզի ստուգվի պայմանագրի փոփոխության՝ Դրամաշնորհի համար համապատասխանության պայմանները բավարարող լինելու հանգամանքը:

11) Սկզբնական նախագծի փոփոխությունը

Ծրագրի սկզբնական նախագծի ցանկացած էական փոփոխության նկարագրությունը ներկայացվում է մինչեւ փոփոխված նախագծի հետ կապված ցանկացած աշխատանք իրականացնելը:

Տարընթերցումից խուսափելու համար, ՃՄՀԳ–ի կողմից նշված՝ նախագծի էական փոփոխություն կամ պայմանագրի էական փոփոխություն չհանդիսացող ցանկացած փոփոխության համար ՃՄՀԳ–ի կողմից համապատասխան համաձայնեցում չի պահանջվում:

[Դատարկ թողնել]

Առդիր 3

Հատկացման ընթացակարգը

Բաժին 1. Բանկային պայմանագիրը եւ վճարման լիազորագիրը

Ստացողը բանկային պայմանագիրը (այսուհետ՝ Բանկային պայմանագիր) կնքում է Ճապոնիայի բանկի հետ (այսուհետ՝ Գործակալ բանկ) եւ Դ/Հ-ի ստորագրումից անմիջապես հետո Գործակալ բանկում բացում է հաշիվ (այսուհետ՝ Դրամաշնորհի հաշիվ): Բանկային պայմանագրով սահմանվում են Գործակալ բանկի եւ Ստացողի գործառույթներն ու պարտականությունները՝ ՃՄՀԳ-ից Դրամաշնորհ ստանալու եւ Ճապոնական դրամաշնորհի միջոցներից Մատակարարին (Մատակարարներին) վճարման լիազորագրի (այսուհետ՝ Վճարման լիազորագիր) օգտագործմամբ վճարում կատարելու մասով: Բանկային պայմանագրով նախատեսված ընթացակարգերը կատարելու նպատակով՝ ՃՄՀԳ-ի կողմից ստուգված յուրաքանչյուր պայմանագրի մասով Ստացողը Վճարման լիազորագիր է տալիս Գործակալ բանկին:

Բաժին 2. Վճարման ընթացակարգը

Վճարումը կատարվում է Մատակարարի (Մատակարարների) կողմից ներկայացվող պահանջագրի հիման վրա: Վճարման պահանջագիրը եւ անհրաժեշտ մյուս փաստաթղթերը Մատակարարի (Մատակարարների) կողմից ներկայացվում են Ստացողի կողմից Վճարման լիազորագրով լիազորված Գործակալ բանկ, եւ այդ փաստաթղթերը համապատասխանաբար ներկայացվում են ՃՄՀԳ: Ներկայացված վճարման պահանջագիրը եւ անհրաժեշտ մյուս փաստաթղթերը հաստատելուց հետո ՃՄՀԳ-ն Դրամաշնորհի հաշվին է փոխանցում Դրամաշնորհի պահանջվող գումարը ճապոնական իենով:

Դրամաշնորհն ստանալուց հետո Գործակալ բանկը Ստացողի անունից Դրամաշնորհի հաշվից վճարում է կատարում Մատակարարին (Մատակարարներին):

[Դատարկ թողնել]

Առդիր 4

Ստացողի պարտավորությունները

Հ/Փ-ում սահմանված՝ Ստացողի պարտավորությունների համաձայն, Ստացողը ստանձնում է ստորեւ ներկայացված աղյուսակներում թվարկված պարտավորությունները: ՃՄՀԳ-ն եւ Ստացողը կարող են ժամանակ առ ժամանակ գրավոր համաձայնության գալ ստորեւ ներկայացված աղյուսակներում նկարագրված՝ Հ/Փ-ով սահմանված պարտավորությունների շրջանակներում առանձին գործողությունների, վերջնաժամկետների եւ այլ հարցերի վերաբերյալ:

1. Ստացողի հատուկ պարտավորությունները, որոնք չեն ֆինանսավորվելու Դրամաշնորհի շրջանակներում

1) Մրցույթից առաջ

N	Գործողություններ	Վերջնաժամկետ	Պատասխանատու	Նախահաշվային արժեք	Հղում
1	Բացել բանկային հաշիվ (Բանկային պայմանագիր (Բ/Պ))	Դ/Հ-ն ստորագրելուց հետո 1 ամսվա ընթացքում	ՀՀ կենտրոնական բանկ		
2	Ներկայացնել ծրագրի դիտանցման հաշվետվություն (մանրամասն նախագծի արդյունքների հետ միասին)	մինչեւ մրցութային փաստաթղթեր պատրաստելը	ՀՀԸ		
3	Նշանակել Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ մրցույթի անցկացմանը հետեւելու համար՝ նախքան դրա մասին ծանուցելը	Մրցույթից մեկ (1) ամիս առաջ	ՀՀԸ		

2) Ծրագրի իրականացման ընթացքում

N	Գործողություններ	Վերջնաժամկետ	Պատասխանատու	Նախահաշվային արժեք	Հղում
1	Վ/Լ տալ Ճապոնիայի բանկին (Գործակալ բանկին)՝ Մատակարարին (Մատակարարներին) վճարելու համար	պայմանագիրը (պայմանագրերը) ստորագրելուց հետո 1 ամսվա ընթացքում	ՀՀԸ		
2	Ստանձնել հետեւյալ միջնորդավճարների գծով պարտավորությունները Ճապոնիայի բանկի առջեւ՝ Բ/Պ-ով նախատեսված բանկային ծառայությունների դիմաց				
	1) Վ/Լ ավիզոյի գծով միջնորդավճար	պայմանագիրը (պայմանագրերը) ստորագրելուց հետո 1 ամսվա ընթացքում	ՀՀԸ	20.000 ճապոնական իեն	
	2) Վ/Լ գծով վճարման միջնորդավճար	յուրաքանչյուր վճարում	ՀՀԸ	100.000 ճապոնական իեն /մեկ վճարման համար	
3	Ապահովել արագ բեռնաթափումը եւ մաքսազերծումը ստացող երկրում գտնվող բեռնաթափման տրանսպորտային հանգույցում եւ աջակցել Մատակարարին (Մատակարարներին) տվյալ երկրում ներքին տրանսպորտային փոխադրման հարցում	Ծրագրի ընթացքում	ՀՀԸ		
	1) Իրականացնել անհրաժեշտ ընթացակարգեր ապրանքները հարկումից ազատելու եւ մաքսազերծելու համար			200.000 ՀՀ դրամ	
	2) Ներքին տրանսպորտային փոխադրում դեպի ծրագրի իրականացման վայր				
4	Ճապոնիայի այն ֆիզիկական անձանց եւ (կամ) երրորդ երկրների ֆիզիկական անձանց, որոնց ծառայությունները կարող են պահանջվել ապրանքների եւ (կամ) ծառայությունների մատակարարման մասով, տրամադրել այնպիսի հնարավորություններ, որոնք կարող են անհրաժեշտ լինել նրանց՝ Ստացողի երկիր մուտք գործելու եւ իրենց աշխատանքը կատարելու նպատակով այնտեղ մնալու համար	Ծրագրի ընթացքում	ՀՀԸ	-	
5	Ապահովել ազատում այն մաքսատուրքերից, ներքին հարկերից եւ այլ վճարների գանձումներից, որոնք	27.300.000	ՀՀԸ	-	

	ապրանքների եւ (կամ) ծառայությունների գնման մասով կարող են կիրառվել Ստացողի երկրում	ՀՀ դրամ			
6	Կրել Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր այն ծախսերը, որոնք չեն ծածկվում Դրամաշնորհով	Ծրագրի ընթացքում	ՀՀԸ	-	
7	Ներկայացնել ծրագրի դիտանցման հաշվետվություն պայմանագրով (պայմանագրերով) նախատեսված յուրաքանչյուր աշխատանքի իրականացումից հետո, ինչպիսիք են՝ բեռնառաքումը, հանձնումը, տեղադրումը եւ շահագործման մասով վերապատրաստումը	յուրաքանչյուր աշխատանքի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում	ՀՀԸ	-	
	Ներկայացնել ծրագրի դիտանցման հաշվետվություն (վերջնական)	պայմանագրով (պայմանագրերով) նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման ակտի ստորագրումից հետո մեկ ամսվա ընթացքում	ՀՀԸ	-	
8	Շինությունները համալրել անհրաժեշտ ենթակառուցվածքներով եւ ապահովել համապատասխան պահեստային տարածք Ծրագրի շրջանակներում ձեռք բերված սարքավորումների համար	սարքավորումների ժամանումից առաջ	ՀՀԸ	27.300.000 ՀՀ դրամ	
9	Ապահովել անհրաժեշտ եւ համապատասխան մարդկային ռեսուրսներ սարքավորումների գործարկման համար	Ծրագրի ընթացքում	ՀՀԸ	34.000.000 ՀՀ դրամ	
10	Պատրաստել եւ հեռարձակել տվյալ Ծրագրի վերաբերյալ փաստավավերագրական հաղորդում (հաղորդումներ) Ծրագրի իրականացման փուլում	Ծրագրի ընթացքում	ՀՀԸ		
11	Ծրագրի շրջանակներում թվայնացված հաղորդումների վերջում տեղադրել Ճապոնական կողմի հետ համագործակցության վերաբերյալ գրառում	Ծրագրի ընթացքում	ՀՀԸ		
12	Մշակույթի նախարարությանը եւ Կրթության եւ գիտության նախարարությանը տեղեկացնել կրթական եւ մշակութային հաղորդումների թվայնացման վերաբերյալ	Ծրագրի ընթացքում	ՀՀԸ		

3) Ծրագրից հետո

N	Գործողություններ	Վերջնաժամկետ	Պատասխանատու	Նախահաշվային արժեք	Հղում
1	Պատշաճ եւ արդյունավետ կերպով պահպանել եւ օգտագործել ճապոնական դրամաշնորհի շրջանակներում տրամադրված սարքավորումները 1) Պահպանման ծախսերի բաշխում 2) Շահագործման եւ պահպանման կառուցվածք 3) Ընթացիկ ստուգում/Պարբերական հսկողություն	Տեղադրման եւ կարգավորման ավարտից եւ (կամ) նախնական վերապատրաստումից հետո	ՀՀԸ	32,000,000 ՀՀ դրամ	
2	Ապահովել թվայնացված ծրագրերի արդյունավետ օգտագործումը հանրության համար	հաղորդումների թվայնացումից հետո	ՀՀԸ		
3	Անցկացնել հանձնման արարողություն	Ծրագրի ավարտից հետո	ՀՀԸ		
4	Ապահովել հանրային ճանաչում՝ երկրում ՀՀԸ–ի լրատվական ծրագրերի եւ հաղորդումների առաջմղման միջոցով		ՀՀԸ		
5	Ապահովել հանրային ճանաչում՝ ՀՀԸ–ի կայքի միջոցով		ՀՀԸ		
6	Ծրագրի շրջանակներում ձեռք բերված սարքավորումների վրա փակցնել Ճապոնիայի ազգային դրոշի պատկերով պիտակ		ՀՀԸ		

(Բ/Պ՝ Բանկային պայմանագիր, Վ/Լ՝ Վճարման լիազորագիր, Կ/Չ՝ Կիրառելի չէ

ՀՀԸ՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերություն)

2. Ստացողի՝ դրամաշնորհի միջոցներից ֆինանսավորվող այլ պարտավորություններ

N	Գործողություններ	Վերջնաժամկետ	Գումարը (միլիոն ճապոնական իեն)
1	Սարքավորումների ձեռքբերում՝ ներառյալ դրանց տեղադրումը եւ կարգավորումը եւ (կամ) դրանց վերաբերյալ սկզբնական վերապատրաստումը	Ծրագրի իրականացման ընթացքում	
2	Հետեւյալ տրանսպորտային փոխադրումների իրականացում՝		
	1) Ապրանքների ծովային (օդային) փոխադրում Ճապոնիայից դեպի ստացող երկիր		
	2) Ներքին տրանսպորտային փոխադրում բեռնաթափման տրանսպորտային հանգույցից դեպի ծրագրի իրականացման վայր		
3	Ծրագրի իրականացման վայրում սարքավորումների տեղադրման եւ կարգավորման ծախսեր		
4	Ծրագրի իրականացման վայրում սկզբնական վերապատրաստման ծախսեր		
5	Մանրամասն նախագծման, մրցույթի մասով աջակցության եւ վերահսկողության իրականացում (Խորհրդատվական ծառայություններ)		
	Ընդամենը		

(Ծանոթագրություն) Ստացողի կողմից պարտավորությունների առաջընթացը կարող է հաստատվել եւ ժամանակ առ ժամանակ թարմացվել՝ ՃՄՀԳ–ի եւ Ստացողի միջեւ գրավոր ձեւով տեղեկատվության փոխանակման միջոցով:

[Դատարկ թողնել]